ամեն մի գիւղի համար համարւում են կատարեալ պատիժ ու պատուհաս։ Այս իսկ պատճառով Թբքախօս գիւղացի Հայերը բարոյապէս մնանկացած, նիւթապէս մինչև կոկորդը պարտքերի մէջ թաղուած և թուրք վաշխառուների ձեռքին կատարեալ ստրուկ գերի դարձած, տնտեսապէս քայքայուած ու ամենաթշուառ վիճակի մէջ են։ Ամեն մի գիւղում թէև կան մի քանի գրագէտ և հայախօս երիտասարդներ, բայց սրանք էլ մի առաջնորդող և ձեռներէց ղեկավար չունին։ Ընդհանրապէս թէ ուտիախօս և թէ Թբքախօս գտնւում են թանձր խաւարի ու տգիտութեան մէջ թաղուած։ Ուր ոչ միայն ուսման, գիտութեան կենսատու ճառագայթները դեռ ևս չեն թափանցել, այլև երկրագործութիւնը, ինչպէս ասացի, երկրագործական մեքենաներն ու գործիքները իրենց նախնական հնադարեան աննախանձելի վիճակի մէջ են։ Գիւղական ամենակարևոր արհեստներ, որպիսիք են քարտաշութիւն ու որմնադրութիւն, ատաղձագործութիւն ու դերձակութիւն, երկաթագործութիւն ու դարբնութիւն, կլէկչութիւն ու պանրագործութիւն՝ թէև նահապետական վիճակի մէջ են, բայց և այնպէս այս արհեստները բացառապէս հկւոր հայերի և լեգգինների ձեռքումն են։ Ահա մի յետընկած գաւառ, ուր մեծամեծ գործ կարող է կատարել Թիֆլիզի Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը, եթէ կաթնատնտեսութեան փորձեր կատարէր Նիժ և Վարդաշէն գիւղաքաղաքներում։